

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 5-ին, հինգշաբթի, երեկոյան ժամերգությունից հետո, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց օրհնությամբ և «Պահպանիչ»-ով վարդապետական լանջախաչ շնորհել Մայր Աթոռի երիտասարդ միաբաններ հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանին, հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանին և հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողապալյանին, նրանց բարվոք և ազնիվ ծառայությանց որպես հայրապետական գնահատություն։

Պարգևատրվածները, ծնկի եկած Իշման Ս. Սեղանի առաջ, իրենց հոգևոր Հոր ձեռքից աջահամբույրով ստացան իրենց ապագա գործունեության ուղին և նպատակը խորհրդանշող լանջախաչերը, դրանք սրբությամբ և հոգևոր արթնությամբ կրելու ուխտով և խոստումով։

Այս ուրախ առիթով Վեհափառ Հայրապետը խաչազգեաց վարդապետներին խոսեց իմաստալից մի խրատական «Այլ մեք քարոզեսցուք զխաչելեալն Քրիստոս՝ հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն» առաքելական բնաբանով։

Երեկոյան ժամը 7-ին, նոր Վեհարանում Վեհափառ Հայրապետը բարեհաճեց իրեն սեղանակից դարձնել Մայր Աթոռի ողջ միաբանությանը։

Ընդունելության ժամանակ, խաչապսակ վարդապետներին ջերմորեն շնորհավորեցին գերաշնորհ Տ. Սահակ, գերաշնորհ Տ. Հայկազուն, գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանները, հոգեշնորհ Տ. Վահան, Տ. Մուշեղ վարդապետները, հոգեշնորհ Տ. Արսեն, Տ. Նարեկ աբեղաները և Մայր Աթոռի սարկավագները։

Պարգևատրվածները խոսք առնելով, որդիական իրենց երախտագիտությունն ու սրտագին շնորհակալությունները հայտնեցին Վեհափառ Հայրապետին՝ այդ բարձր և պարտավորեցնող պարգևի համար և խոստացան է՛լ ավելի եռանդով և նվիրումով աշխատել Նորին Ս. Օծության հովանու և ղեկավարության տակ՝ Մայր Աթոռի պայծառացման համար։

Հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը Հոգևոր Ճեմարանի ավագ վերակացուն է և միաժամանակ անգլերեն լեզվի դասատու Ճեմարանում։

Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը Մայր Տաճարի ավագ լուսարարն է և կրոնի ուսուցիչ Հոգևոր Ճեմարանում։

Հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողապալյանը Մայր Աթոռում մի շարք պատասխանատու պաշտոններ կատարելուց հետո, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ մեկնում է Լոնդոն՝ 3 տարով հետևելու աստվածաբանական դասընթացների։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է խաչապսակ երիտասարդ վարդապետներին, մաղթելով, որ նրանք այսուհետև ևս լինեն իրենց ապագա ծառայության ասպարեզներում «մշակք առանց ամօթոյ», հուրախություն Վեհափառ Հայրապետի և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի։